Հաղորդակցություն, մեդիա և հասարակություն մագիստրոսական ծրագիր

«Հաղորդակցություն, մեդիա և հասարակություն» մագիստրոսական ծրագիրը գործում է ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտում 2011/12 ուստարվանից: Ուսուցման տևողությունը 4 կիսամյակ է: Ծրագրին կարող են դիմել բակալավրիատի կրթական աստիճան ունեցողները: Անգլերեն լեզվի լավ իմացությունը խիստ ցանկալի է:

Ծրագրի ղեկավարն է մշակութաբան Հրաչ Բայադյանը

«Հաղորդակցություն, մեդիա և հասարակություն» մագիստրոսական ծրագիրը թույլ կտա ուսանողներին ձեռք բերել զանգվածային հաղորդակցության ոլորտի ուսումնասիրության համար անհրաժեշտ տեսական և գործնական գիտելիքներ: Ծրագրում տեղ գտած մասնագիտական դասընթացները կազմվել են ե վրոպական և ամերիկյան համալսարանական նմանատիպ ծրագրերի հիման վրա: Դասավանդումը իրականացվում է այդ համալսարաններում ընդունված նորագույն դասագրքերով:

Քննարկվող հիմնական թեմաների թվում են.

- Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների քաղաքական, հասարակական և մշակութային նշանակությունները,
- Առաջընթաց և տեխնոլոգիաներ,
- Նոր մեդիա/ավանդական մեդիա,
- Մշակութային իմպերիալիզմ և մշակութային գլոբալացում,
- Գլոբալացում եւ ազգային պետության ճակատագիրը,
- Զանգվածային հասարակություն և սպառողական մշակույթ,
- Մեդիա և գաղափարաբանություն,
- Ներկայացում (ռեպրեզենտացում) և ինքնություն. անձնական ու խմբային ինքնությունների կառուցումը,
- Մեդիա տեքստերի (պատկերի և տեքստի) նշանագիտական (սեմիոտիկ) և դիսկուրսային վերլուծություն,
- Գլոբալ տեղեկատվական հոսքեր և հակահոսքեր,
- Հասարակական գիտակցության կառուցվածքը, հասարակություն և անհատ:

Հիմնական դասագրքերից են.

Manuel Castells, The Information Age: Economy, Society, and Culture, vol. 1: The Rise of the Network Society, Oxford: Blackwell, 1996, (Second edition, 2000, Third edition with a new introducion, 2010).

David Holmes, Communication Theory: Media, Technology and Society, London: SAGE Publications, 2005.

Paul Long and Tim Wall, Media Studies: Texts, Production and Context, London: Pearson Longman, 2009.

Chris Barker, Cultural Studies: Theory and Practice, 3rd edition, London: Sage, 2008.

J. Macgregor Wise, Cultural Globalization: A user's guide, Oxford: Blackwell, 2008.

Colin Sparks, Globalization, Development and the Mass Media, London: SAGE Publications, 2007.

Դասավանդվող ***հիմնական մասնագիտական առարկաներն են.***

- ✓ Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ և հասարակություն
- ✓ Գլոբալացում և գլոբալ տեղեկատվություն
- ✓ Մեդիայի և մշակութային ուսումնասիրություններ
- ✓ Մեդիայի ուսումնասիրության մեթոդներ
- ✓ Հասարական գիտակցություն և մեդիամիջավայր
- ✓ Նշանագիտություն և հաղորդակցության տեսություն

Կամընտրական առարկաներից են.

- ✓ Զանգվածային հաղորդակցության միջազգային համատեքստը
- ✓ Միջազգային հարաբերություններ և հաղորդակցություն
- ✓ Հաղորդակցություն և սոցիալական կոնֆլիկտ
- ✓ Քաղաքական սոցիոլոգիա

Տեղեկությունների համար դիմել ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկանատ:

Հեռ.՝ 55-41-30

Էլ. Փոստ՝ jourfac@ysu.am